Ի՞նչ է վարկային պատմությունը և ի՞նչ նպատակով է այն հարկավոր

Վարկային պատմությունը դա դիմումատուի (ֆիզիկական կամ իրավաբանական անձի) վերաբերյալ վարկային տեղեկատվությունն է, որը բնութագրում է վարկառուի ստանձնած վարկային պարտավորությունների մասով պարտքերը, վճարումները, վճարումների սովորությունները կամ պարտավորությունների կամ դրանց կատարման վերաբերյալ տեղեկատվություններ: Այն, որպես կանոն, օգտագործվում է ֆինանսական կազմակերպությունների կողմից վարկերի տրամադրման վերաբերյալ որոշում կայացնելու ընթացքում: Դրական վարկային պատմություն ունենալը կարևոր դեր է խաղում վարկի տրամադրման վերաբերյալ որոշման կայացման հարցում:
Նախկինում դրսևորած վատ վարկային պատմությունը կարող է հիմք հանդիսանալ նոր ստացվող վարկերի պայմանների խստացման կամ ընդհանրապես չտրամադրման համար:
Վարկային պատմության մեջ ներառվում են հարցման պահին նախորդող 5 տարիների վերաբերյալ տվյալները:

Վարկային սքոր գնահատականի էությունը

Վարկային սքոր գնահատականը ցուցանիշ է, որը ձևավորվում է վարկային պատմության հիման վրա և ցույց է տալիս՝ որքանով է տվյալ անձը պարտաճանաչ որպես վարկառու: Սքոր գնահատականի հիման վրա կարող է որոշվել հաճախորդի վարկավորման հնարավոր սահմանաչափը, ժամկետը և այլ պայմաններ կոնկրետ վարկատեսակի համար:
Վարկային սքորը տալիս է վարկառուի վարկային ռիսկի (վարկարժանության) թվային գնահատականը՝ որպես սպառողական կրեդիտավորման ռիսկի մակարդակի չափորոշման առանցքային գործիք: Վարկառուի սքոր գնահատականը տատանվում է 300 – 850 միջակայքում:
Վարկի տրամադրման որոշման կայացման հարցում կիրառվում են ԱՔՌԱ, Ֆայկո սքոր վերլուծական ձևերը:
Սքոր գնահատականների վրա ազդող գործոններից են՝ հաճախորդի վարկային պատմությունը, գործող վարկերի քանակը, գումարը, նոր վարկային հայտ ներկայացնելու հաճախականությունը, վարկերի հերթական վճարումներն առանց ուշացումների իրականացնելը և այլն:

Վարկային պատմության և սքոր գնահատականի կարևորությունը

Վարկային պատմությունը և սքոր գնահատականը կարևոր են, քանի որ վարկի համար դիմելուց, ֆինանսական կազմակերպությունը, մինչև վարկ տրամադրելու որոշում կայացնելը, ուսումնասիրում է դիմումատուի վարկային պատմությունն ու գնահատում, թե որքանո՞վ է վերջինս պատասխանատու որպես վարկառու: